# DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
## ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate


Թիւ 2607
Մարտ 13, 1997

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Ծ. Վրդ. Գարայեան
Հովիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Եունիըն Սիթի

Սիրելի Հայր Վազգէն,

Ստացած ենք համայնքի Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 5, 1997 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքի Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 2, 1997-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի վեց անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Ջաք Աբգարեան
Էնտի Աւետիսեան
Ալիս Պօյաճեան
Էն Տէտէեան
Ջաւէն Յովսէփեան
Մերի Ծալաքեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Անդամական Ժողովի ատենագրութիւնը կը պակսէր տեղեկագիրներուն մէջ։ Բարի եղէք առաջին առիթով ատենագրութիւնը ղրկել Առաջնորդարան։

Կ՚օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանին ներքեւ պահէ համայնքի անդամները եւ բոլորին եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Սիրոյ ողջունիւ

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ


630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558